ՄՈՍԿՎԱ.

# ՍՍՌՄ ԺՈՂԿՈՄՍՈՎԵՏ, ԸՆԿ. ՄԻԿՈՅԱՆԻՆ

Թանկագի՛ն Անաստաս Իվանովիչ.

*Այսօր մեզ մոտ՝ Հայաստանում բերկրալից տոն է։ Հայաստանում Սովետական իշխանություն հաստատվելու 23-րդ տարեդարձը զուգադիպեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի բացման օրվան։*

*Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի Գիտությունների Ակադեմիայի անդամները և նրա բացմանը նվիրված անդրանիկ հանդիսավոր նիստի բոլոր մասնակիցները հղում ենք Ձեզ՝ Սովետական հզոր պետության նշանավոր գործչին, մեր սիրելի առաջնորդ մեծ Ստալինի մերձավոր զինակցին ջերմագին, բոցավառ ողջույն։*

*Այս օրերին, երբ ամբողջ սովետական ժողովուրդը հրճվում է փառապանծ Կարմիր Բանակի փայլուն հաղթանակներով, երբ հայ ժողովուրդը տոնում է իր ազատագրության բերկրալից տոնը՝ Հայաստանում Սովետական կարգերի հաստատման 23-րդ տարեդարձը, Սովետական կառավարության որոշմամբ հիմնվեց Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի Գիտությունների Ակադեմիան, մեր կուլտուրայի և գիտության հզոր օջախը։*

*Ձեր ճշգրիտ գնահատությամբ՝ երբեմնի Հայաստանը, որը «որբերի երկիր էր, արցունքի երկիր, աղքատության ու վայրենի կամայականության երկիր», շնորհիվ Սովետական կառավարության հոգատարության, շնորհիվ Լենին-Ստալինի պարտիայի ազգային իմաստուն քաղաքականության, այժմ դարձել է մեծ Սովետական Միության առաջավոր ռեսպուբլիկաներից մեկը, զարգացած ու ծաղկած իր տնտեսությամբ, իր կուլտուրայով, իր գիտությամբ։*

*Մեր սիրելի Անաստաս Իվանովիչ.*

*Ձեր անձնական օրինակը՝ պատանեկությունից հարազատ ժողովրդին, մեր մեծ սովետական ժողովրդին Ձեր մատուցած անձնազոհ ծառայությունը, Ձեր բոցավառ հայրենասիրությունը, հիանալի գործունեությունը, մանավանդ հայրենական պատերազմի օրերին Ձեր անսահման նվիրվածությունն ու հավատարմությունը բոլշևիկների մեծ պարտիային և նրա հանճարեղ առաջնորդ ընկեր Ստալինին, անսահմանորեն ոգեորում և աշխատանքային ու մարտական մեծագույն սխրագործությունների են մղում մեզ բոլորիս,—գիտության և կուլտուրայի աշխատողներին, ամբողջ սովետական հայ ինտելիգենցիային, ռազմաճակատի և թիկունքի բոլոր մարտիկներին։*

*Մենք երջանիկ ենք Ձեզ հաղորդելու, մեր հարազատ Անաստաս Իվանովիչ, որ մոխիրների միջից վերածնված հայ կուլտուրան, արվեստն ու*

գիտությունը, Սովետական իշխանության շրջանում և հատկապես վերջին տարիների ընթացքում, անցան աճման և զարգացման աննախընթաց ուղի։

Աճեցին և ամրապնդվեցին ինտելիգենցիայի բազմաթիվ կադրեր։ Ավագ սերնդին պատկանող ալեհեր գիտնականների կողքին ծնունդ առավ երիտասարդ, տաղանդավոր գիտնականների մի սերունդ։

Մենք անհուն սիրով ու նվիրվածությամբ համախմբված ենք բոլշևիկների մեծ պարտիայի շուրջը, հայ ժողովրդի համար երջանիկ կյանք ստեղծած մեր ուսուցիչ ու առաջնորդ մեծ Ստալինի շուրջը։ Հայաստանի ինտելիգենցիան իր անձնվեր, ստեղծագործ աշխատանքով ծառայում է իր Սովետական հայրենիքին, առաջ է մղում մեր ժողովրդի կուլտուրան ու գիտությունը, որոնց զարգացման ու բարգավաճման գործում Դուք, սիրելի Անաստաս Իվանովիչ, անգնահատելի դեր եք կատարել և կատարում։

Մեր Գիտությունների Ակադեմիան ստեղծվեց գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ մղվող հայրենական դաժան պատերազմի պայմաններում, ուստի մենք խորապես գիտակցում ենք, որ մեր առաջին և սրբազան պարտքն է՝ մեր ժողովրդի հետ միասին, սովետական եղբայրակից մյուս ռեսպուբլիկաների ու ժողովուրդների հետ միասին, ռուս մեծ ժողովրդի գլխավորությամբ, մեր բոլոր ուժերն ի սպաս դնել հիտլերյան բարբարոսների դեմ պայքարելու և այդ պայքարը հաղթական վախճանին հասցնելու գործին, նշանաբան ընդունելով մեծ Ստալինի ցուցումը՝ ամեն ինչ ռազմաճակատի համար, ամեն ինչ հաղթանակի համար։

Մեր հարազատ Անաստաս Իվանովիչ, մեր ժողովրդի համար այս պատմական անմոռաց օրը՝ ոգևորված սովետական ինտելիգենցիայի ընկեր Ստալինի տված բարձր գնահատականով, ուժերն ու եռանդն է՛լ ավելի լարելու նրա կոչով, խոստանում ենք Ձեզ, Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի նորաստեղծ Գիտությունների Ակադեմիան դարձնել սովետական առաջավոր գիտության կենտրոն, բարձրորակ գիտական նոր կադրերի պատրաստման դարբնոց։

Մեր գործունեության մեջ մենք միշտ կհիշենք և կիրականացնենք Ձեր խորհուրդները՝ պահանջկոտ լինել մեր հանդեպ, չհրապուրվել և չհանգստանալ ձեռք բերված հաջողությամբ, միշտ առաջ նայել, համարձակ խիզախել, օր ավուր համառորեն առաջ մղելով գործը, ամրապնդել ձեռք բերվածը, ձգտել նոր հաջողությունների։

Թանկագին Անաստաս Իվանովիչ. վստահ եղեք, որ մենք ունենք բավականաչափ ուժ և հաստատ կամք և վճռականություն՝ պատվով կատարելու մեր Ակադեմիայի առաջ դրված բոլոր խնդիրները։

Խոստանում ենք Ձեզ, մեր սիրելի ընկեր Միկոյան, մեր բոլոր ուժերը, մեր գիտությունը և ընդունակությունները, մեր ամբողջ ջանքն ու եռանդը գործադրել է՛լ ավելի առաջ մղելու ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական մեր կուլտուրան։

Մենք կաշխատենք կրկնապատիկ եռանդով, որպեսզի օգնենք մեր հարազատ Կարմիր Բանակին՝ արագացնելու անարգ թշնամու ջախջախումը։

Անդուլ աշխատանքով, գիտական նորանոր հայտնագործություններով և դրանք արմատացնելով արտադրության մեջ, կնպաստենք է՛լ ավելի

*զարգացնելու մեր երկրի ժողովրդական տնտեսությունը և է՛լ ավելի ամրապնդելու հերոսական Կարմիր Բանակի ռազմական հզորությունը՝ հանուն լուսավորության ու պրոգրեսի հաղթանակի, հանուն սովետական ժողովրդի փառքի, հանուն գերմանա-ֆաշիստական զավթիչների վերջնական ջախջախման։*

*Կեցցե՛ սովետական առաջավոր ժողովրդական գիտությունը։*

*Կեցցե՛ մեծ Ստալինի հավատարիմ և մարտական զինակից, Սոցիալիստական Աշխատանքի Հերոս ընկեր* Միկոյանը:

*Կեցցե՛ Սովետական զինված ուժերը ոգեշնչող ու կազմակերպող, Գերագույն Գլխավոր Հրամանատար, մեր ժամանակների մեծագույն զորավար, առաջավոր գիտության կորիֆեյ ընկեր* Ստալինը:

*Ընդունված է Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի բացմանը*
*նվիրված հանդիսավոր նիստում, 1943 թ. նոյեմբերի 29-ին։*

**МОСКВА.**

## СОВНАРКОМ СОЮЗА ССР ТОВ. МИКОЯНУ

*Дорогой Анастас Иванович!*

Сегодня у нас в Армении радостный праздник—XXIII годовщина установления советской власти в Армении совпала с днем открытия Академии наук Армянской ССР.

Мы, академики и все участники торжественного заседания, посвященного открытию Академии наук Армянской Советской Социалистической республики, шлем Вам, замечательному деятелю могучего Советского государства, ближайшему соратнику нашего любимого вождя великого Сталина, пламенный, сердечный привет.

В эти дни, когда весь советский народ восторженно радуется блестящим победам нашей доблестной Красной Армии, когда армянский народ празднует радостный день своего освобождения—XXIII годовщину установления советской власти в Армении,—решением Советского правительства учреждена Академия наук Армянской ССР—могучий очаг нашей культуры и науки.

Армения в прошлом, по правильному Вашему определению, бывшая страна сирот, страна слез, страна нищеты и дикого произвола, благодаря заботе Советского правительства, благодаря мудрой национальной политике партии Ленина—Сталина, сейчас превратилась в одну из передовых республик великого Советского Союза, с развитой, цветущей экономикой, культурой и наукой.

*Дорогой наш Анастас Иванович!*

Ваш личный пример, Ваше самоотверженное служение с юных лет своему народу, великому советскому народу, Ваш пламенный патриотизм, Ваша замечательная деятельность, особенно за время отечественной войны, Ваша беспредельная преданность и верность великой партии большевиков и ее гениальному вождю товарищу Сталину вдохновляют и воодушевляют на трудовые и боевые подвиги всех нас, работников науки и культуры, всю армянскую советскую интеллигенцию, всех борцов фронта и тыла.

Мы рады сообщить Вам, родной Анастас Иванович, что возрожденные из пепелищ армянская культура, искусство и наука за годы советской власти и, в особенности, за последние годы прошли небывалый путь роста и развития.

Выросли и окрепли многочисленные кадры интеллигенции. Рядом

с маститыми учеными старшего поколения родилось новое поколение молодых, талантливых ученых.

Мы с безграничной преданностью и любовью сплочены вокруг великой партии большевиков, вокруг создателя счастливой жизни армянского народа, нашего учителя и вождя товарища Сталина. Своим самоотверженным, творческим трудом интеллигенция Армении служит своей советской родине, двигает вперед культуру и науку нашего народа, в развитии и расцвете которых Вы, *дорогой Анастас Иванович*, сыграли и играете неоценимую роль.

Наша Академия наук была создана в условиях продолжающейся ожесточенной войны против немецко-фашистских захватчиков, поэтому мы глубоко сознаем, что нашим первейшим и священным долгом является совместно с нашим народом, вместе с народами других братских республик, под руководством великого русского народа, под водительством нашей любимой партии Ленина—Сталина, отдать все силы на борьбу с гитлеровскими людоедами и довести эту борьбу до победного конца, имея девизом указание великого Сталина— „все для фронта, все для победы“.

*Дорогой наш Анастас Иванович!* В этот исторический, незабываемый для нашего народа день, воодушевленные данной товарищем Сталиным высокой оценкой советской интеллигенции, его призывом к дальнейшему напряжению сил и энергии, обещаем Вам превратить новосозданную Академию наук Армянской Советской Социалистической республики в центр передовой советской науки, в кузницу подготовки новых высококвалифицированных научных кадров.

В своей деятельности мы всегда будем помнить и осуществлять Ваши советы—быть требовательными к самим себе, не увлекаться и не успокаиваться достигнутыми успехами, всегда смотреть вперед, смело дерзать, изо дня в день упорно и настойчиво двигая дело вперед, закреплять достигнутое, стремиться к новым успехам.

*Дорогой Анастас Иванович!* Будьте уверены, что у нас имеются достаточные силы, твердая воля и решимость для того, чтобы с честью справиться со всеми задачами, стоящими перед нашей Академией наук.

Обещаем Вам, *дорогой товарищ Микоян*, применить все наши силы, наши знания и способности, все наши усилия и энергию для того, чтобы еще быстрее двинуть вперед нашу национальную по форме, социалистическую по содержанию культуру.

Будем работать с удвоенной энергией, чтобы помочь нашей родной Красной Армии ускорить разгром подлого врага. Неутомимым трудом, новейшими научными открытиями, их внедрением в производство будем способствовать еще большему развитию народного хозяйства нашей страны и еще большему укреплению мощи героической Красной Армии, во имя победы просвещения и прогресса, во имя славы советского народа, во имя окончательного разгрома немецко-фашистских захватчиков.

Да здравствует советская передовая народная наука!

Да здравствует верный и боевой соратник великого *Сталина*— Герой Социалистического Труда товарищ *Микоян!*

Да здравствует вдохновитель и организатор советских вооруженных сил, Верховный Главнокомандующий, величайший полководец нашего времени, корифей передовой науки товарищ *Сталин!*

**Принято на торжественном заседании, посвященном открытию Академии наук Армянской ССР, 29 ноября 1943 г.**